ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **27/12/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Հմայակ Խաչատրյանը, Արթուր Մելոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր իրավաբանական, քարտուղարության,անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ Լեյլի Խաչատրյանը

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 14 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Հաստատել համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 14 հերթական նիստի օրակարգը՝

1. Ծաղկաձոր համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:
2. Գումար վերադարձնելու մասին:
3. Ծաղկաձոր համայնքի սեփականություն համարվող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:
4. Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Ծաղկունյաց հրապարակի տարածքը վարձակալության տրամադրելու մասին:

5. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 167 որոշման հավելվածի թիվ 1 կետը ուժը կորցրած ճանաչելու:
6. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
7. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:
8. Ծաղկաձոր համայնքի Փյունիկ գյուղի ջրավազանի կառուցման համար հողատարածք հատկացնելու մասին:
9. Ծաղկաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները հաստատելու մասին:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 220/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղականինքնակառավարմանմասին» օրենքի 18-րդհոդվածի 1-ինմասի 5-րդկետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով և 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2023 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածների՝ ըստ 1-6 հատվածների, որից՝
եկամուտների գծով՝ 593782.9 հազարդրամ
ծախսերի գծով՝ 1478782.9 հազարդրամ
դեֆիցիտը (պակասուրդը)՝ -885000.0 հազար դրամ

1) համայնքի բյուջեի եկամուտները՝ հատված 1,
2) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ հատված 2,
3) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3,
4) համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ հատված 4,
5) համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ հատված 5,
6) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ հատված 6:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին՝
1) համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ ըստ

գործառական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,
2) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 20 %-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է
մտնում պաշտոնականհրապարակման օրվան հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 221-Ն/

Լսեցին
ԳՈՒՄԱՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Լիլիա Սահրադյանի դիմումը՝

Լիլիա Սահրադյանին վերադարձնել 900125002023 հաշվեհամարին
ավել փոխանցված 130 630 /հարյուր երեսուն հազար վեց հարյուր երեսուն/
Հայաստանի Հանրապետության դրամ գումարը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 222/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով,
«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1.Աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 223/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԾԱՂԿՈՒՆՅԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին օրենքի>> 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Անհատ ձեռնարկատեր Հրանտ Մարտիրոսյանի գրությունը՝

1. Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Ծաղկունյաց հրապարակի տարածքը 3 ամիս ժամկետով տրամադրել վարձակալության անհատ ձեռնարկատեր Հրանտ Մարտիրոսյանին՝ ամանորյա տոներին և ձմռան ամիսներին կարուսելներ և ատրակցիոններ տեղադրելու և շահագործելու նպատակով:

2. Տարածքի տրամադրման համար սահմանել վարձավճար՝ ամսական 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

Կողմ-11 Դեմ-2 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 224/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 167 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով

1. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 14-ի <<Համայնքային սեփականություն համարվող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին>> թիվ 167 որոշման 1-ին կետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 225/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության <<Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին>> թիվ 698-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 39-րդ կետի 1-ին ենթակետով՝

Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների փողոց թիվ 32/6 հասցեում գտնվող, 0.0789 հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 226/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին և 6-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Վոլոդյա Գուրգենի Հովհաննիսյանի դիմումը՝

1. Վոլոդյա Գուրգենի Հովհաննիսյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր, Օրբելի Եղբայրների փողոց, թիվ 34/1 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 07-005-0008-0054/ 0.083 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման համար նախատեսված հողամասին և հողամասի վրա առկա 21,23 քմ մակերեսով շինությանը կից՝ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների փողոց, թիվ 32/6 հասցեում գտնվող 0.0789 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման համար նախատեսված հողամասը:

2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 12 763 337 (տասներկու միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար երեք հարյուր երեսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 227/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՅՈՒՆԻԿ ԳՅՈՒՂԻ ՋՐԱՎԱԶԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով՝

Ծաղկաձոր համայնք Փյունիկ գյուղի գյուղատնտեսական նշանակության հողերից 0,1889 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածք հատկացնել Ծաղկաձոր համայնքի Փյունիկ գյուղի ջրավազանի կառուցման համար:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 228/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի պահանջներով՝

Սահմանել Ծաղկաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 229/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՀՈՎԻԿ ԳՈԳՈԼՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՑԱԳԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՐԶ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАЙКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ
REGION TSAGHKADZOR MUNICIPALITY
03027029

Նիստն արձանագրեց՝ Լեյլի Խաչատրյանը

_____